# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Նո 2

1946 թվի փետրվարի 14-ին կայացավ արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեյի նիստը. Ներկա էյին կոմիտեյի անդամներ

ընկ. ընկ. Բ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ, Հ. ՄԱՐՋԱՆՅԱՆ, Մ. ՍԱՐՅԱՆ, Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ, Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ :

Կոմիտեյի աշխատակիցներից՝ ընկ. ընկ. Խ. ՄՈՍԻՆՅԱՆ, Հ. ՊԱՐՈՆՅԱՆ, Մ. ՔՈՉԱՐՅԱՆ :

1/ ԼՍԵՑԻՆ -. Բաթումի քաղաքում արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման պունկտի կազմակերպման մասին.
/ Զեկ. ընկ. Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ /

1/ ՈՐՈՇԵՑԻՆ -. 1. Հանձնարարել ընկեր Հ. Մաթևոսյանին, կազմել Սովետական Վրաստանի Ժողկոմսովետի որոշման նախագիծ Բաթումի քաղաքում արտասահմանից ներգաղթող հայերին ընդունման պունկտ կազմակերպելու համար, հատուկ շենքեր տրամադրելու մասին. այդ կապակցությամբ ընկեր Մաթևոսյանին գործուղել Թբիլիսի:

2. Բաթումի քաղաքում կազմակերպված ընդունման պունկտի շենքերի վերանորոգումը կազմակերպելու նպատակով, կազմել հանձնաժողով՝ հանձնարարելով այդ հանձնաժողովին, գնալ Բաթումի, կազմելու վերանորոգման աշխատանքների նախագիծ :

2/ ԼՍԵՑԻՆ -. Արտասահմանյան հայերին Սովետական Հայաստան տեղափոխելու նախապատրաստական հարցերի արդյունքների մասին :
/ Զեկ. ընկ. Բ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ /

2/ ՈՐՈՇԵՑԻՆ -. Հանձնարարել ընկեր Բ. Աստվածատրյանին, նամակ գրել Սովետական Հայաստան արտասահմանից ներ-

գաղթող հայերին ընդունման եվ տեղավորման կոմիտեյի գոյության մասին, այն երկրների հայերի կոմիտեյի նախագահներին, որոնք մին- չեվ որս սեր նամակները չեն ստացել, ինչպես որինակ՝ ֆրանսիա, Ռումինյա եվ ուրիշները:

ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀ՝ / Բ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ /

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ / Ա. ՍԱՐԳՍՅԱՆ /